ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ԿԱՊԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանի, «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն Արտյոմ Նաղդյանի և «Կապանի երաժշտական փառատոն» հասարակական կազմակերոպության նախագահ Սևակ Ավանեյանի, այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ,

Կարևորելով մշակույթի ոլորտում պետություն-մասնավոր գործընկերային կապերի խորացումը, Հայաստանի Հանրապետությունում երաժշտարվեստի և փառատոնային մշակույթի զարգացումը՝ պայմանավորվեցին հետևյալի վերաբերյալ.

1. ԿՈՂՄԵՐԸ համատեղ ջանքեր կգործադրեն Հայաստանում և մարզերում, մասնավորապես՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, երաժշտարվեստի և փառատոնային մշակույթի կայացման և զարգացման համար, որի հիմնական բեմահարթակ կծառայի Կապանի արվեստի պետական քոլեջի Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճը:

2. ԿՈՂՄԵՐԸ կնպաստեն բարձրակարգ, միջազգայնորեն մրցունակ գեղարվեստական արդյունքի ձևավորմանը:

3. ԿՈՂՄԵՐԸ՝ միջազգային ստեղծագործական կապերի ընդլայնման և խորացման միջոցով, կիրականացնեն համատեղ ստեղծագործական, կրթական և մշակութային նախագծեր:

4. ԿՈՂՄԵՐԸ՝ Հայաստանում և մարզերում, մասնավորապես՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, երաժշտարվեստի և փառատոնային մշակույթի զարգացման նպատակով,

միջոցներ կձեռնարկեն համապատասխան ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի ձևավորման ուղղությամբ:

5. ԿՈՂՄԵՐԸ կխթանեն երաժշտական փառատոնի շրջանակում միջազգային հեղինակություն ունեցող երաժիշտների միջոցով հայաստանյան պատանի երաժիշտ - կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ արվեստագիտական և վարպետության դասերի միջոցով:

6. ԿՈՂՄԵՐԸ կհամագործակցեն երաժշտարվեստի և փառատոնային մշակույթի զարգացման միջոցով մշակութային զբոսաշրջության ակտիվացման գործում:

7. «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ Կապանի միջազգային երաժշտական փառատոնի հետ համագործակցությամբ և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ ստանձնում է 2024 թ. համերգաշրջանի ընթացքում համերգային նախագծերի իրականացման հետ կապված աշխատանքների կազմակերպումը: Ծրագիրը նախատեսում է միջազգային և տեղական արտիստների մասնակցությամբ համերգների, վարպետության դասերի ինչպես նաև «Դպրոցականի ֆիլիարմոնիա» կրթամշակութային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացում:

Սույն Հուշագիրը միջազգային պայմանագիր չի հանդիսանում և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրվել է Երևանում՝ երեք օրինակից՝ 2024 թ.ապրիլի 1-ին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	«Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ-ի տնօրեն	«Կապանի երաժշտական փառատոն» ՀԿ-ի նախագահ
Դանիել Դանիելյան	Արտյոմ Նաղդյան	Սևակ Ավանեսյան